

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԸ ԼԵՒ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՇԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS). 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY). 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА. 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS. 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱԳՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ. 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США. 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA. 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА. 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Մերի Հովհաննիսյան

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)

***Հիմնաբառեր.** հայ մանկավարժության պատմություն, մանկավարժության տեսաբան, կրթության նկատմամբ արժեքային մոտեցումներ, հայ կրթական կյանք, հայեցի կրթություն, դաստիարակություն, ֆիզիկական դաստիարակություն, դպրոցի բարեփոխում, ուսուցման մեթոդ, մայրենի լեզվի ուսուցում:*

Հայ մանկավարժության պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Ղազարոս Աղայանը: Նրա գրական ու մանկավարժական ժառանգությունը, կրթության նկատմամբ արժեքային մոտեցումները կարող են կարևոր ուղենիշ լինել գալիք սերունդների համար:

Ղ. Աղայանն իր մանկավարժական գործունեությունը սկսել է 1870 թ.՝ Ախալցխայի հայկական դպրոցում դասավանդելով: Այդ ժամանակ հայ կրթական կյանքը, դպրոցը գտնվում էին ոչ հուսալի վիճակում. չկային հաստատված ծրագրեր, աշխարհաբար դասագրքեր, մանկավարժական որակյալ ու բանիմաց կադրեր, ուսուցիչների մեծ մասը՝ սահմանափակ մտածողությամբ ու ծխական մտայնության տեր. «Ախալցխայում ես զգացի, որ կոչված եմ խարազանով սրբել, մաքրել մեր կրթության տաճարները բարոյական ավազակներից: Այդ ձգտումը իմ մեջ մինչև ֆանատիկոսության հասավ»¹:

Հենց այդ տարիներին Աղայանը, կարդալով և ուսումնասիրելով մանկավարժությանն ու դպրոցին առնչվող բազում աշխատություններ, հատկապես եվրոպական դասական մանկավարժների՝ Պեստալոցցու, Դիստերվեգի, Ուշինսկու և մեծանուն այլ մանկավարժների երկերը, ձեռնամուխ եղավ հայ դպրոցի բարեփոխման գործին:

Աղայանը դասավանդել է Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Շուշիի, Երևանի դպրոցներում, եղել Վրաստանի և Իմերեթիայի հայկական դպրոցների թեմական տեսուչ: 1871 թ. տեղափոխվելով Ալեքսանդրապոլ՝ մշակեց իր մանկավարժության սկզբունքները, գրեց մանկավարժական-մեթոդական բազմաթիվ աշխատություններ: Աղայանի մանկավարժական տարբեր մոտեցումներն ու կրթության կազմակերպման տարբեր հարցեր ներկայացված են 1869 թ. «Արարատ» ամսագրում տպագրված «Խորհրդածություն դաստիարակության վերաբերյալ» հոդվածաշարում:

Նոր դպրոց ունենալու համար առաջին հերթին անհրաժեշտ էին դասագրքեր, մասնավորապես մայրենի լեզվի դասագրքեր. «Այստեղ սկսեցի մշակել իմ նորագույն մեթոդը, թե ինչպես պետք է ուսուցանել մայրենի լեզուն: Նախ ցույց տվի գործով՝ դասավանդությամբ, և հետո խմբի ցանկությամբ գրեցի և հրահանգը, թե ինչպես պետք է ուսուցանել, հետո էլ կազմեցի դասագիրք»²:

Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի» Ա, Բ, Գ, Դ տարիների համար դասագրքերից առաջինը շուրջ 40 տարի (1875-1916 թթ.) եղել է ամենահայտնի ու տարածված այբբենարանը

* Հոդվածը ներկայացվել է 11.12.2020 թ., գրախոսվել՝ 15.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1969, էջ 457:

² Նույն տեղում, էջ 471:

հայկական դպրոցներում: Այդ այբբենարանն իր կենդանի ու հյուսիսային լեզվով հեղաշրջում էր հայ դպրոցում: Գործող դպրոցներում աշակերտները գրաճանաչություն սովորում էին՝ կարդալով սաղմոսներն ու ժամագրքերը: Դպրոցական նշված համակարգից ազատվելու առաջին փորձը դասագրքերի կազմումն էր: Նման փորձ ժամանակին արել էր նաև Խաչատուր Աբովյանն իր՝ եվրոպական դասագրքերի օրինակով կազմված «Նախաշավիղ կրթության» գրքով:

Հայ երեխային մատչելի ու հասկանալի լեզվով դասագիրք ստեղծելու նպատակով Աղայանը կազմեց «Արևիկ» այբբենարանը, որն իր բնորոշմամբ «մի կենդանի մանուկ էր, մանուկների ընկեր, նրանց հետ խոսող, նրանց սրտից ջուր խմող»¹:

Շուշիի թեմական դպրոցում Աղայանը նախ աշխատել է որպես ուսուցիչ, ապա՝ 1880 թ.՝ տեսուչ: Մանկավարժական գործունեության այդ տարիներին նա հետևողականորեն պայքարել է դպրոցում տիրող կամայականությունների ու բռնությունների դեմ: Բոլոր հայկական դպրոցներում Աղայանը մեծ հոշակ է վայելել: Նրան «ուսուցիչների ուսուցիչ» էին անվանում: Ինչպես Ս. Չորյանն է նշում, նա իր աշակերտների հետ խոսում էր անառարկելի հեղինակությամբ՝ յուրաքանչյուր բառն ընդգծելով, որ լսողը լավ ընկալի: «Ավելին, որպեսզի ունկնդիրներն իրեն սխալ չհասկանան, նա մատով օդի մեջ դնում էր ստորակետ, միջակետ և վերջակետ: Այնքան մշակված էին մանկավարժական շարժումները, որ զգում էիր անգամ, թե որտեղ է դնում բուրբը»²:

Աղայանը թեմական դպրոցի աշակերտների հոգատար դաստիարակն էր: Նրա ամենասովորական զրույցներն ու դասերը ընթանում էին հաճելի ու արդյունավետ մթնոլորտում: Նա կարողանում էր բոլոր աշակերտներին համախմբել իր շուրջը, սկսնակ ուսուցիչներին օգնել իր փորձով, անձնական խորհուրդներով, մեթոդական ցուցումներով, փորձնական ու գործնական դասեր տալով³: Հենց այդ գործնական աշխատանքների ընթացքում էլ նա ձևավորեց ու զարգացրեց կրթության նկատմամբ իր արժեքային մոտեցումները:

Աղայանը՝ որպես մանկավարժության տեսաբան, մշակել է ինքնատիպ մանկավարժական համակարգ, ձևավորել կրթության նկատմամբ արժեքային մոտեցումներ, որոնց կիրառման գերակա նպատակը ուժեղ, խելացի ու առաքինի քաղաքացիներ կրթելն ու դաստիարակելն էր: Այդ գործընթացում առաջնությունը տրվում էր հայոց լեզվի ուսուցմանը, բարոյական և գեղագիտական դաստիարակությանը:

Հայկական դպրոցներում (Ալեքսանդրապոլի, Երևանի թեմական, ծխական և հայաբնակ այլ վայրերում) մանկավարժական գործունեության տարիներին ձեռք բերած հարուստ փորձի հիման վրա նշանավոր մանկավարժը Շուշիի թեմականում, օրիորդաց, ծխական դպրոցներում մեծ ուշադրություն դարձրեց մայրենի լեզվի ուսուցման հարցերին. «Հայի կրթության հիմքը պետք է լինի ոչ միայն Նորա ամբողջ բնությունը զարգացնելը, այլև այնպես պետք է կրթել, որ նա լավ իմանա յուր մայրենի լեզուն, յուր հայրերի կրոնը, որպեսզի ոչ միայն կյանքի բոլոր արկածների դեմ պատերազմելով կարողանա բարելավացնել յուր վիճակը, այլև լավ գիտենա յուր ազգության գլխավոր հատկանիշները՝ լեզուն և կրոնը»⁴:

Աղայանի կարծիքով ուսուցման ու դաստիարակության կատարելագործման ճանապարհին մեծ պահանջներ են ներկայացվում ամենից առաջ մայրենի լեզվին: Առանց մայրենի լեզվի խոր ու գիտակցական յուրացման, առանց տեսական ու գործնական անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների անհնարին է թափանցել մյուս առարկաների խորքերը: Մայրենին դառնում է յուրօրինակ բանալի՝ այլ լեզուների ու տարբեր գիտությունների գաղտնիքները բանալու, առաջացած դժվարությունները հաղթահարելու համար: Երբ երկ-

¹ Լեո, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1966, էջ 309:

² «Ղապարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», Ե., 1967, էջ 458:

³ Շավարշյան Ա., Աստվածատրյան Վ., Ասատրյան Ա., Ղ. Աղայանը հայ մանկավարժ, Ե., 1941, էջ 196-197:

⁴ Աղայան Ղ., նշվ. աշխ., էջ 457:

րի տնտեսական, սոցիալական ու քաղաքական կյանքի առանձնահատկությունները թելադրում են կրթել ապագայում լուսավորյալ մարդիկ, տվյալ դեպքում ավելի է ընդգծվում մայրենի լեզվի ուսուցման կարևորությունը:

Հայեցի կրթության անհրաժեշտությունը մեծանուն մանկավարժը պայմանավորում էր ոչ միայն հայ երեխայի ներդաշնակ ու համակողմանի զարգացմամբ, այլև հայ ժողովրդի արժանիքները կրող, հայրենիքին անմնացորդ նվիրված քաղաքացիներ դաստիարակելու կարևոր հանգամանքով: Ինչպես իրավացիորեն նկատել է Դ. Դեմիրճյանը, «Աղայանը մանկանը սովորեցնում է մայրենի լեզուն, սիրել է տալիս այն: Նա մեծանում է մանկան հետ, դառնում կրակոտ պատանի, և Աղայանը լցնում է պատանու հոգին ազնվության, ճշմարտության, քաջության և աշխատանքի գաղափարներով»¹:

Դպրոցի բարեփոխման ուղին կրթադաստիարակչական գործի ժողովրդականացումն էր, որտեղ կարևոր դեր ուներ նաև ընտանիքը: Ընտանեկան օջախում օրորոցը մանկան առաջին դպրոցն է, իսկ մայրը՝ առաջին դաստիարակչուհին, օրորոցի երգը՝ առաջին դասը: Ընտանեկան դաստիարակությունը համարելով կրթության նախաշեմ՝ Աղայանը բարձրացնում էր երկսեռ ուսուցման հարցը՝ ընդգծելով կիրթ մայրերի կարևոր դերակատարումն ապագա սերնդի դաստիարակության գործում: Նա ընտանեկան դաստիարակության մեջ հատկապես բարձր էր գնահատում մոր դերը՝ որպես առաջին դաստիարակչուհի, որպես երեխայի համար աշխարհի հայտնագործող, քանի որ երեխան մոր ձեռքը բռնած է կյանքում իր առաջին քայլերն անում, ապա՝ մտնում կյանքի հորձանուտները: Բարեկիրթ սերունդներ ունենալու համար պետք է ունենալ ուսյալ մայրեր: Մոր շնորհիվ դրվում է նաև երեխայի ազգային դաստիարակության հիմքը: Նման կարծիք հայտնում էր նաև մեծանուն գրող Բաֆֆին իր «Հայ կինը» մենագրության մեջ: «Պարոններ, – ընդգծում է նա, – եթե դուք ցանկանում եք կրթված զավակներ ունենալ, դրա համար էլ հարկավոր է կրթված մայրեր պատրաստել, և այդ պետք է սպասել մի օրիորդաց դպրոցից»²:

Կինը ներկայացվում էր որպես «մարդկային ընկերության գլխավոր քաղաքակրթիչ տարր»: Չանազան պառավների, ինքնակոչ վարժապետների մոտ ստացած կրթությունը և ընտանիքի միապետական կազմակերպության բռնակալությունը կնոջը զրկում էին ինքնուրույն մտածողությունից՝ դարձնելով սոսկ կրավորական մի էակ: Մեծանուն հայ գրող-մանկավարժները, անշուշտ, մեծ նշանակություն են տվել կնոջ հասարակական գործունեությանը: Աղայանը հասարակական կյանքի զարգացման գլխավոր խոչընդոտներից մեկը համարում էր հենց այդ գործունեության բացակայությունը: Նրա համոզմամբ, սակայն, առաջին քայլը պետք է լինի ճշմարիտ կրթությունը, որը կնախապատրաստի կնոջը հասարակական ասպարեզ դուրս գալու: Աղայանն այս տեսանկյունից էլ հրատապորեն էր ընդգծում երկսեռ դպրոցների ստեղծման անհրաժեշտությունը: Կինը ոչ միայն կյանքի ընկեր է և կողակից, այլև ընտանիքի մայր, որն իր ստացած դաստիարակությունը փոխանցելու է ապագա սերնդին:

Աղայանը դաստիարակությունը բնորոշում է որպես «գովանի բնավորություն», իսկ կրթությունը՝ գիտելիքներ ու մտավոր ունակություններ զարգացնող «գորություն»: Ժառանգականության գործոնը չի կարելի ժխտել, բայց չպետք է անտեսել նաև միջավայրի գործոնը: Երեխաներն ունեն երկու ծնող. երկրորդը հասարակական միջավայրն է՝ երեխաների զարգացման, ձևավորման հզոր ազդակը: Չարգացման ենթակա են մարդու մարմինը, միտքը, հոգին կամ զգացմունքը, որոնք միասին կազմում են մի ներդաշնակ միասնություն, ամբողջություն³:

1876 թ. հեռանալով Ալեքսանդրապոլից՝ Աղայանը 6 տարի դասավանդել է Երևանում, Շուշիում, 1882-1883 թթ.՝ Թիֆլիսում՝ Սոֆյա Բաբայանի մանկապարտեզում, 1893-1894

¹ «Ղապարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», էջ 414:

² Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1983, էջ 378:

³ Տէս Աղայան Ղ., նշվ. աշխ., էջ 435:

թթ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Հենց այդ տարիներին էլ կազմել է «Ուսումն մայրենի լեզվի» երկրորդ և երրորդ դասագրքերը, ինչպես նաև մամուլում տպագրել մանկական բանաստեղծություններ: Մեծանուն մանկավարժը ոչ միայն իր գործունեությամբ, այլև ստեղծագործություններով է նպաստել մանուկների դաստիարակությանը՝ նրանց ներարկելով մարդկային բարձրագույն արժեքներ, նաև ընդգծելով գիտելիքի դերը, որը ձեռք է բերվում կրթությամբ: Երևանի գավառական ուսումնարանի փոքրիկ այգում Աղայանի աշակերտները ջանասիրաբար մշակում էին, վարում, ցանում հողը, ջրում, խնամում այգին, հավաքում պտուղները և այլն, նաև յուրացնում գյուղատնտեսական գիտելիքներ, նույնը՝ նաև զանազան արհեստների ուսուցման հարցում: Երեխաների դաստիարակության հարցում մանկավարժն առաջ էր քաշում դպրոցներում արհեստների ուսուցման հարցը՝ պահանջելով դպրոցներում ունենալ արհեստանոցներ:

Մանկավարժը կտրականապես դեմ էր իր ապրած ժամանակաշրջանում մեծ տարածում ունեցող մարմնական պատիժներին: Բազմաթիվ կրթօջախներում Աղայանը մեծ ուշադրություն դարձրեց ուսուցման կազմակերպման հնացած ձևերին ու եղանակներին: Նա խստորեն քննադատում էր դպրոցների տեսուչներին, հոգաբարձուներին կրթության կազմակերպման աշխատանքներում տեղ գտած թերությունների համար, մասնավորապես, որ պատշաճ մակարդակով չէր գնահատվում ուսուցիչների գործունեությունը: Աղայանն իր մանկավարժական փորձով, վարպետությամբ կարողացավ իր ընդունակությունները փոխանցել սկսնակ ուսուցիչներին:

Աղայանը քննադատում էր գործող դպրոցը, որը ոչինչ չէր տալիս աշակերտներին, որտեղ դասավանդվում էին միայն կրոն և հայոց լեզու, այլ բնորոշմամբ՝ կյանքից հեռացած կրթություն էր, քանի որ դպրոցում սովորածը հերքվում էր կյանքի մեջ: Դրա համար պետք էր վերակառուցել դպրոցը՝ մերձեցնելով այն կյանքին:

Դեմ չլինելով օտար դրականը վերցնելուն՝ Աղայանը միաժամանակ մերժում էր կուրորեն, «կապկաբար» ընդօրինակելը: Նրա կարծիքով ամեն ինչ պետք էր հարմարեցնել մեր ազգի առանձնահատկություններին, տնտեսական պայմաններին, քաղաքական իրադրությանը: Նա իրավացիորեն բողոքում էր և մերժում այն մանկավարժներին, որոնք աղանդավորի մոլեռանդությամբ ընդօրինակում էին ուրիշներին:

Ուսուցչական բացառիկ ընդունակությունների համար Աղայանը կարևորում էր մանկավարժական վարպետությունը, դասավանդման կատարելությունը և մանկավարժի անսահման սերը երեխաների նկատմամբ: Նա բարձր էր գնահատում ուսուցչի դերը՝ պահանջելով մասնագիտական, մանկավարժական խորը գիտելիքներ, դասատվության վարպետություն, նորարարություն ու հնարամտություն, բարոյական անաղարտություն: Ուսուցիչը սիրելի կարող է լինել միայն իր արժանի ու մարդավայել վարքով, երբ նա է «կատարելատիպ աշակերտաց համար», ապա՝ «մի՛ լինիր այնքան քաղցր, որ կուլ տան քեզ և ոչ այնքան դառը, որ թթեն վրադ», ուսուցչի պատիվը բարձր պետք է պահել, թշվառ է այն «ազգը, որ չի մեծարում և ապահովում ուսուցչին»: Աղայանն առանց խտրականության դասավանդում էր դպրոցի բոլոր դասարաններում: Իր վեհ ու ազնիվ բնավորությամբ սիրելի էր բոլորի կողմից, քանի որ անկեղծ էր, գիտեր նվիրվել ամբողջ հոգով ու սրտով:

Մանկավարժի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը: Մանկավարժի առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող հիմնական պահանջը ֆիզիկապես ու հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացումը մանկավարժն է: Մանկավարժն անմիջականորեն չի մասնակցում հասարակական արդյունաբերության գործընթացին, սակայն ձևավորում է մարդ, որը հասարակության նյութական և հոգևոր բարիքների ստեղծողն է, ազգի և պետության հիմնարար արժեքների կրողը և հասարակության ամենաթանկ հարստությունը: Երկրի բարեկեցությունը, մարդկության առաջընթացը մեծապես կախված են աճող սերնդի ստեղծագործական ու հոգևոր ներու-

ժից: Հենց այս սկզբունքներով ու արժեքային մոտեցումներով էլ առաջնորդվում էր Աղայանը՝ մեծ նշանակություն տալով մանկավարժին երեխայի կրթության և դաստիարակության գործում: Մանկավարժը պետք է հասկանա երեխայի հոգին, լինի երեխայասեր, բարի, քնքուշ և ներողամիտ: Աղայանը բերում է հետևյալ համեմատությունը. այն, ինչ մայրը տալիս է իր կաթով, այնպես էլ ուսուցիչը տալիս է իր լեզվով: Մանկավարժի առաջնային գործառույթը մարդկային ներուժի, նրա ոգեղենության վերարտադրումն է: Պահպանելով և փոխանցելով համամարդկային արժեքներ, ձևավորելով երեխային արժեհամակարգը՝ մանկավարժը սերմանում է կատարյալ մարդկային էության ձգտելու ցանկություն, զարգացնում է հոգևոր արժեքներ կրողի զգացողություն, նպաստում հասարակության արժանապատիվ անդամ լինելու ձգտմանը:

Աղայանի կարծիքով ուսումնական գործընթացը պետք է լինի համակարգված ու հաջորդական, մատչելի ու զննական և աչքի ընկնի սովորողների ակտիվությամբ ու ինքնուրույնությամբ: Նշված բոլոր խնդիրները միանշանակորեն կարող են լուծվել ուսուցչի ջանասիրության, նվիրվածության շնորհիվ, հետևապես մանկավարժը պետք է լինի կատարյալ իր գիտելիքներով, վարպետությամբ, աշխատասիրությամբ, սիրով ու հոգատարությամբ, նրա բնորոշիչներն են ազնվությունը, համեստությունը, համբերատարությունը, շիտակությունը, արդարամտությունը, հաստատակամությունը:

Դպրոցն այնպիսի կրթություն պետք է ապահովի, որ նոր սերունդը «հոգեպես և մարմնապես մի աստիճանով» բարձր լինի նախորդից: Աղայանը համոզված էր՝ մանուկն ի ծնե ավելի շատ հակված է դեպի լավն ու բարին, նրան դաստիարակելն ոյուրին է, միայն պետք է ճանաչել նրան իր տարիքի և անհատականության մեջ և դրական օրինակ լինել աշակերտի համար, օգտագործել նաև համոզումը, գրույցը, խրախուսանքը, երբեմն էլ պարսավանքը, որոշ վերապահումներով՝ պատիժը, բայց ոչ երբեք մարմնական: Եվ դրանք արդյունավետ կլինեն, եթե վարվեք արդարամտությամբ, համագործակցված, լինենք հետևողական, անհրաժեշտության դեպքում՝ նաև խստապահանջ¹:

Աղայանը նույն խորաթափանցությամբ կարևորում էր նաև ֆիզիկական դաստիարակության հարցերը: Մեծ թերություն էր համարում, երբ դպրոցում գրեթե տեղ չունեին ֆիզիկական դաստիարակությունը: Ֆիզիկական դաստիարակության առանցքը «առողջ հոգին առողջ մարմնում» դրույթն էր: Իր անձնական կյանքում Աղայանը լայնորեն օգտագործել է աշխատանքային ու ֆիզիկական դաստիարակության միջոցները և օրինակ ծառայել շրջապատի համար:

Երեխաների զարգացման ամենալավ ու արդյունավետ միջոցներից է համարել խաղը, զբոսանքները, բազմատեսակ վարժությունները, աշխատանքն ու նմանօրինակ զբաղմունքները. «Խաղալն ու երգելը երեխայոց... հատկություններն են», հանցագործություն է նրանց զրկել այդ բավականությունից²:

Աղայանը երեխայի զարգացման և դաստիարակության գործում կարևորում էր մանկական ստեղծագործությունների դերը: Անվանի մանկավարժը համոզված էր՝ անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում մանկական ստեղծագործությունների ընթերցանությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ են դառնում: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտմանը, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին:

¹ Տե՛ս Ավետիսյան Ե., Մելքունյան Մ., Ղ. Աղայանի մանկավարժական (ժառանգությունը և նրա այժմեակատությունը), Ե., 1991, էջ 81-85:

² Տե՛ս Աղայան Ղ., նշվ. աշխ., էջ 134:

Աղայանի կարծիքով մանկական ստեղծագործությունները երեխային օգնում են խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր ու հանդիսավոր երևույթները, ամեղծվածային ուժերը և ներմուծել դրանք երկրային իրական կյանք: Յեթնամյա միջոցով, օրինակ, երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերը այս աշխարհում: Այդ հարցում նրան օգնում է ուսուցիչը: Յեթնամյա միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի, ազնիվ ու իմաստուն լինել, աղքատն էլ, որը լիազք, բարեսիրտ ու աննախանձ է: Նա անտրտունք կրում է իր տառապանքները: Անվրեժ է չարիքի դեմ:

Աղայանը խիստ քննադատության էր ենթարկում հոգևորականներին և աշուղներին, որոնք կոչված էին ժողովրդին հոգևոր սնունդ, կրթություն մատակարարելու, բայց իրականում խարխափում էին տգիտության ու խավարի մեջ: Բնորոշելով նման մանկավարժների տված կրթությունը՝ գրում է. «Յայոց պատմագիրներին ծանոթ չէր տեր հայրը, նա չէր տեսել և կարդացել Խորենացի, Եղիշե, Փարպեցի, Եզնիկ, Դավիթ և այլն, այդ պատճառով՝ ազգ, հայ, հայրենիք, Յայաստան բառերը Արությունի ականջին չդիպան ոչ մի օր: Խոսք էր լինում միայն հայոց կրոնի մասին, և տերտերն ասում էր՝ «աշխարհիս երեսին միակ ճշգրիտ կրոնը հայոց կրոնն է, բայց հայերն իրանք անմիաբան ազգ են, դրա համար էլ կորցրել են իրանց թագավորությունը»¹: Այսինքն՝ գրողի կարծիքով յուրաքանչյուր ոք պիտի իր գործունեությունը ծավալի, հոգևորականի դերն այլ է, բացի դրանից՝ հոգևորականները ևս ճշմարիտ կրթություն ստանալու պահանջ ունեն: Եթե դպրոցը դուրս է կրոնական ուղղվածությունից և գտնվում է հոգատար ու բանիմաց ուսուցիչների ուշադրության ներքո, հնարավոր է ճիշտ մոտեցումներով նպաստել ազգային կրթությանն ու դաստիարակությանը:

Աղայանի՝ կրթության մասին արժեքային մոտեցումները արտացոլված են ոչ միայն նրա հոդվածներում, այլև տարբեր ստեղծագործություններում, որոնցում անվանի գրողը սերունդների ապագայի կերտման գործում վճռորոշ տեղը տալիս է ազգային դաստիարակությանը:

«Արություն և Մանվել» վեպի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը ժողովրդի մտավոր վերածնության, դպրոցները միջնադարյան կապանքներից ազատագրելու խնդիրն է: Գրողը ռեալիստական գունավորումներով ներկայացրել է հայկական իրականության խավարն ու հետամնացությունը, գլխավոր հերոսի՝ Արությունի միջոցով պատերազմ է հայտարարել այդ իրականությանը՝ առաջ քաշելով ժողովրդին լուսավորելու իր ծրագիրը: Գլխավոր հերոսի միջոցով Աղայանը առաջ է քաշում կրոնական նախապաշարմունքներից զերծ ազգային դպրոցի գոյությունը: Նա քննադատում է ժամանակի դպրոցը՝ այն համարելով կրոնական կաղապարների ու նախապաշարմունքների մեջ թաթախված, դրա համար էլ հայ երիտասարդները չէին ցանկանում հայկական դպրոցում կրթություն ստանալ, մեկնում էին տարբեր երկրներ՝ ուսումնառություն ամենելու:

«Կես դար ապրելուց հետո ես վճռեցի ահա գրել իմ կյանքի գլխավոր դեպքերը, որոնք որևէ կերպ ազդեցություն են ունեցել իմ մտավոր և բարոյական զարգացման վրա»², – խոստովանում է գրողը: Ինքնակենսագրական ժանրը գրողին թույլ է տվել Աղայան մանկավարժին սեփական կյանքի պատմության մեջ վերարտադրել իր ապրած ժամանակաշրջանի պատմությունը, մասնավորապես կրթական կյանքն ու տիրող հասարակական բարքերը:

«Կենսագրություն» գլխում պատմվում է Արությունի և այն անձանց մասին, որոնք որևէ կերպ ազդեցություն են թողել նրա կյանքի վրա: Ուսումնատվության համար դաժան ժամանակներում նա կրթություն է ստանում Մանիշակի, ապա՝ Շամշուղա գյուղի քահանա տեր Պետրոսի մոտ: «Որ մտնես Վանքի ուսումնարանը, – հորդորում է նրան քույրը, – հետո տերտեր կդառնաս, ուզենաս գրագիր կդառնաս Կոնստանտնուպոլսում, կամ թե չէ վարժապետություն կանես, ժամումն էլ տիրացուություն: Թե որ խելոք կըլես, մի հարուստ մարդ քեզ

¹ Աղայան Ղ., *Երկերի ժողովածու*, հ. 1, Ե., 1962, էջ 22:

² Աղայան Ղ., *Իմ կյանքի գլխավոր դեպքերը*, Թիֆլիս, 1893, էջ 25:

փեսա կշինի, կաշխատի, ձեռնադրել կտա մի հարուստ եկեղեցու վերա: Կամ թե չէ՝ թե որ կուզենաս, կմտնես գիմնագիա, Էնտեղ լավ ռսերեն կսովորես, հետո թագավորական դուլլուդ կմտնես, չինովսիկ կդառնաս, տարեցտարի չինդ կավելանա, մեծ մարդ կդառնաս, համ քեզ կըլիս շահ, համ թագավորին...»¹:

Գրաքննադատները Աղայանի վեպը համեմատել են Խաչատուր Աբովյանի «Վերք Յայաստանի» ստեղծագործության հետ: Աբովյանի վեպի նման Աղայանի ստեղծագործությունը ևս պատերազմ է հին գաղափարների, հին դաստիարակության դեմ, որոնց վրա գրողը չի ողբում, այլ անխնա հարձակվում է և դրանց փոխարեն տարածում Նորն ու լավագույնը: Եվ հենց այս առումով էլ «Վերք Յայաստանին» մեծ նշանակություն է ունեցել վեպի մտահղացման համար: Վեպի գլխավոր կերպարում նկատի ունենալով հենց իրեն՝ գրողը Աբովյանի կերպարում պատկերել է պատերազմը հնօրյա դաստիարակության դեմ: Յերոսին ոչ թե Յարություն, այլ Արություն անվանելով՝ գրողը ցույց է տվել «արիության այն ուղին», որով պիտի ընթանա Նոր սերունդը: Այդ արիությունն ուղղված էր ժամանակի հայակերական քաղաքականության, կրթության դեմ»²:

Ուսման հանդեպ ծարավը Արությունին տրամադրում է մի զենք, որով նա դեմ պիտի կանգներ ամենակույ խավարին: Պատանի գյուղացին ընկնում է թիֆլիսյան միջավայր, հաղորդակից դառնում իսկական գիտությանը և հասկանում, որ իր սովորածները ընդամենը սնտոխապաշտության ու խավարամտության արդյունք են եղել: Իրականության հետ բախումը գնալով ավելի էր սրվում, քանի որ նա ապրում էր մի ժամանակաշրջանում, երբ ուսումնառությունը անհրաժեշտ պահանջ չէր, իսկ խելացի ու շնորհալի մարդը համարվում էր հերետիկոս:

Արությունը մտերմանում է իրեն գաղափարակից երիտասարդի՝ Մանվելի հետ: Արությունը Մանվելին զարմացնում է իր սովորածներով՝ Յին և Նոր կտակարան, Յայսմավուրք, Պոնձե քաղաքի պատմություն, քերականություն և այլն: Իսկ Մանվելը Արությունի նախանձն է շարժում ապագայի՝ քաղաք գնալու և այնտեղ սովորելու հեռանկարով: Սերը դեպի ուսումը երկու պատանիներին միացնող օղակ է դառնում:

Յարկավոր էր փոխել կրթության ու դաստիարակության գործող համակարգը, որն առավելապես խավար և ոչ թե լուսավորություն էր տարածում: Այդ մասին են վկայում Մանվելի խոսքերը. «Բայց ո՞ր են մեզանում նրա ասած կարդացողները, եղածներն էլ ավելի խավար են տարածում, քան թե լույս, ունքը շտկելու տեղ՝ աչքն էլ են հանում»³: Այդպիսի կրթօջախի օրինակ էր դազախեցի Մարտիրոսի վարժարանը, որը 50 աշակերտ ուներ: Ամեն կիրակի աշակերտների ծնողները նրան տուն էին տանում և պատվում: Վերջինս էլ նրանց աչքին գրագետ երևալու համար խրթին գրաբարով էր խոսում: Նման գործունեություն էին ծավալում տիրացու Սարգիսը, կազմարար Մարգարը, տերտերը: «Ամենքն ալ վարժատուն ունին, երեխեք են կարդացնում, բայց ինչ կարդացնել. մեկ օրը մեռելի վրա են, մյուս օր՝ կնունքի, մեկել օր՝ մի ուրիշ բանի. Եսպես քելեխ ուտելով ման են գալիս, երեխեքը տուն դառած իրար միս են ուտում, իրար շորեր պատռում: Ինչ վարժատուն, խոզատունը քեզ օրինակ: Օրը մեկ ժամ կամ կես ժամ նստում են մոտներին, Էդ ժամանակ էլ քանոնը ձեռքներին առած՝ դատարկ բղավում են՝ սո՛ւս կացեք... Մի քանի ամիս մի այբբենն են սովորեցնում, մի քանի ամիս էլ մի «անա-բանա», կամ «են՝ երթի փուլի, ման՝ օրի բիստի»⁴:

Աղայանը քննադատում էր դպրոցներում տիրող կարգերն ու իշխող բարքերը: Նրա՝ կրթության մասին արժեքային մոտեցումների հիմքում ազգային կրթությունն ու դաստիարակություն էին: Աղայանի հիմնական սկզբունքն էր երեխաներին պատրաստել կյանքի համար, ապահովել նրանց համակողմանի ու ներդաշնակ դաստիարակությունն ու զարգացու-

¹ Աղայան Ղ., *Նշվ. աշխ.*, էջ 58-59:

² Տերտերյան Ա., *Յայ կլասիկներ*, Ե., 1944, էջ 198:

³ Աղայան Ղ., *Երկերի ժողովածու*, հ. 1, էջ 81:

⁴ Նույն տեղում:

մը՝ մտավորի, բարոյականի, գեղագիտականի, ֆիզիկականի, աշխատանքայինի անբակտեյի բաղադրիչների միասնությամբ: Դպրոցական ուսումնական ծրագրերում պետք էր ներառել բնագիտական առարկաներ, սովորողներին տալ նաև ճշգրիտ գիտելիքներ, դասավանդմանը՝ գործնական բնույթ՝ կապելով այն կյանքին: Աղայանը կարևորում էր ուսումնական գործընթացի համակարգվածությունը: Մեթոդների ընտրության հարցում ընդունելի էր համարում ամեն մի նպատակահարմար, նույնիսկ մերժելի թվացող միջոց, հնար, որը կապահովեր ուսուցման արդյունավետությունը: Մեծ տեղ էր հատկացնում աշխատանքային դաստիարակությանը. աշխատանքը կյանքի հիմքն է, առանց դրա չի կարող լինել ոչ մի դաստիարակություն: Առողջ սերունդներ ունենալու նախապայման էր համարում մարմնավարժությունը, մասնավորապես զբոսանքները, շրջագայությունները, ֆիզիկական աշխատանքը, մարզումները, բազմաբնույթ վարժությունները և խաղերը: Իր կյանքում Աղայանը լայնորեն կիրառել է աշխատանքային ու ֆիզիկական դաստիարակության միջոցները՝ օրինակ ծառայելով բազմաթիվ մանկավարժների համար:

Կրոնական գաղափարներից զերծ կրթական համակարգ, երկսեռ դպրոցներ, սովորողների համար մատչելի դասագրքեր, բազմաթիվ առարկաների հավելում, ուսուցման նոր մեթոդներ, մանկական, գեղարվեստական ազգային ստեղծագործությունների վրա հիմնված ուսումնական գործընթաց, գեղագիտական, աշխատանքային ու բարոյական դաստիարակության գործընթացի միաձուլում՝ ուսումնական բոլոր առարկաների գծով, գրագետ մայրեր և որևէ գաղափարով չկաղապարված, կրթված ու բանիմաց մանկավարժներ. ահա կրթության արժեքային այն մոտեցումները, որն ուներ ու փորձում էր սերունդների մեջ սերմանել մեծանուն մանկավարժ Ղազարոս Աղայանը: Այս սկզբունքներից շատերն այսօր էլ մնում են արդիական:

Мери Оганнисян, ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. Газарос Агаян занимает особое место в истории армянской педагогики. Его литературное и педагогическое наследие, ценностные подходы к образованию могут стать ориентиром для будущих поколений. Агаян придавал большое значение реформам образовательной системы, в частности, созданию свободных от религиозных идей школ с совместным обучением, добавлению множества предметов, применению новых методов обучения, включению в учебный процесс детских, художественных национальных произведений, слиянию процесса эстетического, трудового и морального воспитания по всем учебным предметам. В воспитании детей большое место он уделил образованным мамам и знающим учителям. В выборе методов он считал приемлемыми любые целесообразные, порой кажущиеся неприемлемыми средства, уловки, которые обеспечили бы эффективность обучения. Великий педагог обусловил необходимость армянского образования не только гармоничным и всесторонним развитием армянского ребенка, но и важным обстоятельством воспитания граждан, несущих ценности армянского народа и преданных родине. Многие из ценностных подходов великого педагога к образованию остаются актуальными и сегодня.

Ключевые слова: история армянской педагогики, теоретик педагогики, ценностные подходы к образованию, армянская образовательная жизнь, армянское образование, воспитание, физическое воспитание, реформа школы, метод обучения, преподавание родного языка.

Meri Hovhannisyann, VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. Ghazaros Aghayan has a special place in the history of Armenian pedagogy. His literary and pedagogical heritage, value-based approaches to

education can be a guide for future generations. Aghayan emphasized the reforms of the educational system, in particular, the establishment of mixed schools free from religious ideas, the addition of many subjects, the use of new teaching methods, the inclusion of national children's and artistic works in the educational process, the integration of aesthetic, work and moral education. In the education of children, he gave a great place to educated mothers and knowledgeable teachers. Aghayan emphasized the coordination of the educational process. In the choice of methods, he considered acceptable any expedient, sometimes seemingly unacceptable means, trick that would ensure the effectiveness of teaching. The great pedagogue conditioned the need for Armenian education not only by the harmonious and comprehensive development of the Armenian child, but also with the important circumstance of educating citizens who bear the values Armenian people and are devoted to homeland. Many of the great pedagogue's value-based approaches to education remain relevant today.

Key words: History of Armenian pedagogy, theoretical pedagogy, value-based approaches to education, Armenian educational life, Armenian education, upbringing, physical education, school reform, teaching method, teaching the native language.